# ՍԱՐԳԻՍ ՃԷՊԷՃԵԱՆ

Հաճընի հերոսամարտին պարագլուխ Պ. Սարգիս Ճէպէճեան, որ իր 8 ամսեայ ինքնապաշտպանութեան ու խիզախ գործունէութեամբ որոշ և փայլուն տեղ մը կը գրաւէ Հայ Ցեղ. պատմութեան մէջ, բնիկ Կեսարացի է: Ան բառին ամենալայն իմաստով, պարտականութեան անձնուէր հսկող զինուոր մըն էր, զուրկ կուսակցական մոլեռանդութենէ։ Կարելի է ըսել ազգային զինուոր մըն էր ազգային բանակին։

Ճէպէճեան, ընդհանուր պատերազմի ամենէն առաջ Օրերուն, 1817ին, հերոսավիպային անցք մը կունենայ Կեսարիայէն՝ Պէյրութ և անկէ Կովկաս ուր ձիաւոր հայ կամաւորներու գլուխն անցած. առիւծի նման կը խոյանար թշնամիին վրայ։ Իր քաջագործութեանց իբրև վարձատրութիւն ստացած է ռուսական պատուանշաններ։

Հայ—Թրքական հաշտութենէն յետոյ, ան Անդրանիկի հետ ա՛ցաւ Ղարաբաղ, Զանգեզուր՝ կռիւը շարունակելու համար։ Երբ Անդրանիկ իր բանակը ցրուելով. ստիպուեցաւ Եւրոպա անցնիլ, Ճէպէճեան եկաւ Պոլիս, և անկէ ալ մէկ քանի ընկերներով անցաւ Կիլիկիա, պարտականութեան դաշտը։ Ան կը վարէր Հաճընի տեղ. միլիտարական պաշտօնը, երբ քէմալականները Մարաշը ջարդելէն յետոյ Հաճընի վրայ կը խուժէին։ Ճէպէճին սակայն արթուն կը հսկէր. անմիջապէս կազմակերպեց ընդդիմադրութիւնը և կոչ ըրաւ Կիլիկիոյ զանազան քաղաքներուն մէջ կեդրոնացած հայ ոյժերուն։ Աւա՜ղ ոչ ոք չլսեց այդ կոչը: Թէև Ադանայի մէջ արշաւախումբ մը կազմուեցաւ, բայց մեր մէջ գոյութիւն ունեցող կուսակցական նեղմիտ ոգին և այլ պատճառներ արգելք եղան խմբին ճանապարհուելուն, մինչև որ Ֆրանսական իշխանութիւնները ցրուեցին զայն։

Այսօր չկայ այլևս Հաճըն. չկան նաև անոր պաշտպան անմահ հերոսները. որ որոնք յաւիտենականութեան գիրկը նետուեցան՝ մեզի կտակելով իրենց կիսատ ձգած գործը շարունակելու վրէժի պարտականութիւնը

Ցարգա՜նք անոնց խնկելի յիշատակին։

Թատերական Քրոնիկ

## «ԳՈՐՐԱՏՕ»Ն

Թատերական ալգոնք սկսաւ. Պ. Կարօ Խաչիկեանի կազմակերպած Իտալացի թատերագիր Ճիագոմէտիի գլուխ գործոցը եղող «Գորրատօ»ով, որ տեղի ունեցաւ 10 Հոկտ. 1925 Թատրոն Քիւրսալի ընդարձակ սրահին մէջ։

Թատերասէր հասարակութիւնը ժամանակին փութացած էր գրաւել թատրոնին մեծագոյն մասը և օթեակները. բայց ինչ որ յաճախ ալ կրկնած ենք ալ աւելի խուռն բազմութիւն մը տարբեր ապաւորութիւն պիտի թողուր խաղացողներուն վրայ. ինչ որ կարծես սովորութիւն դարձած է մեր մէջ, փոխանակ ամիսը անգամ մը թատրոնին 40—50 ղրշ. տալու շատեր կը նախընտրեն սրճարաններու մէջ ժամանակ անցնել և նարտի ու բաղդախաղի մէջ փնտռելով իրենց հաճոյքը. փոխանակ հայ գեղարուեստը և հայ գրականութիւնը քաջալերելու։

Նախ քան քննադատութիւնը երկու խօսք ալ թատրոնի կարգապահութեան մասին. մեր թատերասէրները երբ թատրոն կուգան՝ ձեռքերնին զանազան ապրանքներ բռնած կամ փոքրիկ ծրարիկներ, և հազիւ թէ վարագոյրը վեր վերցած՝ լռելեայն սկսեալ բոլոր աթոռներուն վրայ նստողները կը սկսին պըզըր ուտել, ակռաներով կաղին կոտրել, իսկ ուրիշ կողմ մը կը տեսնէք որ կը խմեն կամ կուտեն զանազան ուտելիքներ, և մի արտօցէ եթէ Եւրոպացի մը ներկայ գտնուի անշուշտ լաւ գաղափար մը չպիտի կազմէ, տեսնելով որ թատրոնը ճաշարանի վերածուած է։ Օտար թատրոններու մէջ ոչ թէ սիկառ կամ ծխախոտ կուտեն, այլ նոյն իսկ կը ջանան չաշխարհին մեղմել արգելք չըլլ հանդիսականաց համար ներկայացման,

Թատերախումբը՝ ղեկավարութեամբ Պէյրութահայութեան ծանօթ Դերասան Պ. Կարօ Խաչիկեանի՝ կրցաւ բաւական անթերի ներկայացում մը հրամցնել առաջին անգամ Պէյրութի մէջ բեմադրելով «Գորրատօ»ն։

«Գորրատօ»ի դերը ստանձնած էր Դեր. Պ. Կարօ Խաչիկեան, որ տարաշատ յաջող կերպով. տանջուած և ընտանեզուրկ բանտարկեալի մը բոլոր վշտերը այնքան բնական կերպով մարմնացուց որ ներկաները կրցան յուզումի և կարեկցութեան վայրկեաններ ապրիլ; Պ. Խաչիկեան ինչպէս միշտ՝ այս անգամ ևս «Գորրատօ»ով կրցաւ նոր անուն մը շահիլ դերասանական ասպարէզին մէջ։

Պ. Բարսեղեան՝ «Պալմիէր»ի դերով շատ յաջող էր, և ասկէ առաջ տեսանք նաև «Գավլուշաշի դերով ևս կրնայ ներկայանալ Պէյրութի յաջողագոյն ամաթէօրներէն մին։

Պ. Ա. Մարաշլեան ևս կրցաւ յաջող կերպով տանիլ «Մօն Սէնիօռ»ի դերը, միայն քիչ մը հասակի անպատեհութիւն ունի։

Պ. Վ. Տէր Վարդանեան Թէպէտև «Տօն Ֆէրնանտօ»ն տարաւ բաւական լաւ, բայց իր յօնքերու անտեղի և յաճախակի պրկումները յաճախ գէշ տպաւորութիւն կը թողուն, որը կրնայ սրբագրուիլ։

Օր. Մաննիկ ի ձայնը բոլորովին քաշուած էր, բայց ամէնայն դէպս բաւական յաջող էր «Ռոզօլիա»յի դերով, իսկ մնացածները ևս հասարակ յաջող էին, և խաղը անցաւ ընդհանուր առմամբ բաւական լաւ։

Կը յուսանք որ ուրիշ նոր բեմադրուին, և ժողովուրդը ծանօթանայ օտար գրագէտներու հեղինակութեանց։

ՍԼԱՔ


### ԾԱԽՈՒ ԷՆ

Ատամնաբոյժներու յատուկ կարգ մը գործիքներ. Նպաստաւոր գներով. Դիմել «Լիբանան»ի տպարանը։

### ՊԱՇՏՕՆ ԿՈՒԶՈՒԻ

Երիտասարդ մը որ գիտէ ֆրանսերէն, անգլիերէն, Թուրքերէն և հայերէն լեզուները, պաշտօն կը փնտռէ վաճառականական կամ ազգային հաստատութեան մը մէջ։ Լաւագոյն յանձնարարականներ. դիմել Թերթիս խմբագրութեան։


### ՍԱԿԱՐԱՆ

16 Հոկտ. 1925

| | |
|---|---|
| Եգիպտ. Ոսկի Ս. դհկ. | 552 |
| Սթէռլին | 539 |
| Տոլար | 111,5 |
| Օսմ. Հնչ. Ոսկի | 488 |
| Ֆրանս » » | 426 |
| Անգղ. » » | 525 |
| Թրք թղթադրամ | 62 |
| » » Պ. Օ. | |
| » Արծաթ Մէճիտ | 47 |
| Սուրիական Ոսկեդրամ | 20,03 |

Ց. Դաւիթեան եւ Ն. Շիրինեան


## ՀՐԱԺԵՇՏԻ ՄԵԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

### ԹԱՏՐՈՆ ՔԻՒՐՍԱԼ

Շաբաթ 17 Հոկտ. 1925 երեկոյեան ժամը 9 30ին
Եգիպտահայ նշանաւոր «ՔՈՄԷՏԻ» թատերախումբին կողմէ
Ղեկավարութեամբ սիրուած դերասան Վ. ԱՐՓՐԱՐ
Ընկերակցութեամբ ՕՐԻ. Ռ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ եւ Ա. ԵԿԷՆԵԱՆԻ

### ՄԵԿՆՈՒՄԻ ԱՌԹԻՒ

Մեծ պատրաստութեամբ կը բեմադրուի առաջին անգամ ըլլալով Պէյրութի մէջ

### ԿՈՒԼ-ՍԿԱՈՒՏ ԿԱՄ ՄԱՏՍ ՄԷՋՆ Է

Ազգային Սկաուտական կեանքէ քաղուած եւ խիստ հետաքրքրական մեծ կատակերգութիւն 3 արար

Հեղինակներ.— Ե. ՕԹԵԼՕՍԵԱՆ Ա. ՔԷՉԵԱՆ ԵՒ ԳՐԷՄ ՍԻՄՈՆ
ԳԻՆԵՐԸ.— Օթեակ 300 Ս. Ղ. Ա. կարգ 50 Բ. կարգ 25 Ս. Ղ.
Խնդրուի տեղի չտալու համար այժմէն ապահովցէք ձեր տոմսերը։




ՓՆՏՌԵՑԷՔ ԱՄԷՆ ՏԵՂ

ՀՕԼՓՐՈՒՖ

ԿԱՆԱՆՑ ԱՐԱՆՑ ԵՒ ՏՂԱՑՈՑ ԳՈՒԼՊԱՆԵՐԸ.

ԴԻՄԱՑԿՈՒՆ. ՃԱՇԱԿԱՒՈՐ ԵՒ ՅԱՄԱՌ ԳՆԵՐՈՎ

ԿԸ ԾԱԽՈՒԻ ԱՄԷՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԵՐՈՒ ՄԷՋ ԴԵՂԻՆ ՏՈՒՓԵՐՈՒ ՄԷՋ:

ԱՐԵՒԵԼՔԻ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ԸՆԴՀ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՊԱՐՈՒՅՐԻ ԵՂԲԱՅՐՔ ԵՒ ԸՆԿ.

ՊԷՅՐՈՒԹ

